«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը ցանկացողներին հրավիրում է մասնակցելու իր կողմից իրականացվող Առաջնորդության զարգացման երկամյա ծրագրին:

Միանալով ծրագրին՝ մասնակիցներին հնարավորություն է տրվում անցնելու մասնագիտական վերապատրաստումներ և երկու տարով գործուղվելու մարզային համայնքներ՝ դասավանդելու տեղի դպրոցներում, ստանալու ամսական ֆինանսական աջակցություն, բացահայտելու սեփական ներուժը և ներգրավվելու արտադասարանական խմբակներում, ինչպես նաև համայնքային ներազդեցության նորարարական նախագծերում: Եթե ունեք բակալավրի աստիճան կամ այն ստանալու եք մինչև այս տարվա հուլիս ամիսը ու պատրաստ եք ձեր կյանքում ու մեր երեխաների կյանքում մեծ փոփոխություններ առաջացնել, ապա սիրով հրավիրում ենք դիմելու մեր ծրագրին: Ծրագրի առավելությունները՝

● Մասնագիտական աճի հնարավորություն

● Ֆինանսական աջակցություն (ի հավելումն դպրոցի աշխատավարձի)

● Անվճար ուսուցում մագիստրոսական ծրագրում (մանկավարժության ոլորտում)

● Ընդարձակ վերապատրաստման ծրագիր (առաջնորդություն, նախագծերի կառավարում և այլն)

● Կարիերայի զարգացման հնարավորություն

● Գործընկեր կազմակերպություններում մասնագիտական զարգացման հնարավորություն

Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել հետևյալ առցանց հայտադիմումը՝ https://www.teachforarmenia.org/application

Ծրագրի պայմանների կամ հայտադիմումի վերաբերյալ ցանկացած տեղեկության համար կարող եք զանգահարել +37441530271 հեռախոսահամարով կամ գրել էլեկտրոնային նամակ հետևյալ հասցեին՝ karine@teachforarmenia.org: